ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/301

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Արագած» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Արագած» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-22/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, արկղերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 22.10.2021թ.-ի թիվ 26/26-1/17335-2021 գրությամբ «Արագած» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 15.10.2021թ.-ի թիվ ՊՆ/02/5558-2021 գրության հիման վրա, 22.10.2021թ.-ին «Արագած» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 22.10.2021թ.-ին:

25.10.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/301 համարի ծածկագիրը:

29.10.2021թ.-ին, 10.11.2021թ.-ին, 17.11.2021թ.-ին և 19.11.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 17.11.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 19.11.2021թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 15.10.2021թ.-ի թիվ ՊՆ/02/5558-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար արկղերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-22/8» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Արագած» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Մասնակից): Հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ մասնակցի հայտով ներկայացված հավելված 1.1-ում՝ ընթացակարգի հրավերով պահանջվող տեխնիկական ցուցանիշներն ամբողջությամբ չեն ներկայացված (բացակայում է արկղի ուրվագծային պատկերը և հատակի կահավորվածության պատկերը): Բացի այդ մասնակցի կողմից

ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող իրական շահառուների մասին տվյալները:

Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը առաջարկել է Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Մասնակիցը սահմանված ժամկետում չի ներկայացրել (ընդհանրապես չի ներկայացրել) պահանջվող շտկումները: Ուստի հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը մերժել է «Արագած» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը:

Կից ներկայացվում են Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-22/8» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Արագած» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Արագած» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 25.10.2021թ.-ի գրությամբ դիմել է «Արագած» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.10.2021թ.-ի թիվ 26/26-1/17335-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

«Արագած» ՍՊԸ-ն 16.11.2021թ.-ին թիվ ԱՐ/182 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ գհայտնել է հետևյալը.

««Արագած» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/301 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

«Արագած» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված թիվ ՀՀ ՊՆ-

ԳՀԱՊՁԲ-21-22/8 ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Մրցույթ), որին 03.10.2021թ. մասնակցության հայտ է ներկայացրել «Արագած» ՍՊԸ-ն:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 08.10.2021թ. նիստի արձանագրության համաձայն՝ «Արագած» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ: Գնահատող հանձնաժողովը, նույն նիստի ժամանակ, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ որոշում է կայացրել կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատաս-խանությունները:

Այնուհետև՝ գնահատող հանձնաժողովի 12.10.2021թ. տեղի ունեցած նիստի համապատասխան արձանագրության համաձայն՝ «Արագած» ՍՊԸ-ի կողմից վերը նշված ժամկետում (մինչև 09.10.2021թ.) անհմապատասխանությունները ընդհանրապես չեն շտկվել, որն էլ հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի կողմից՝ որոշում է կայացվել «Արագած» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակ¬ցության դադարեցմանը:

Օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյուն¬քում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը,կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհա-մա¬պատաս¬խան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատաս-խանությունը:

Ինչպես արդեն հայտնել ենք, «Արագած» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված թիվ ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-22/8 ծածկագրով գնման ընթացակարգին:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության համաձայն՝ «Արագած» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, որն էլ հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով՝ առաջարկելով մասնակցին շտկել արձանագրված անհամապատաս¬խանությունները:

Այնուհետև՝ գնահատող հանձնաժողովի 12.10.2021թ. տեղի ունեցած նիստի համապատասխան արձանագրության համաձայն՝ «Արագած» ՍՊԸ-ի կողմից վերը նշված ժամկետում անհմապատասխանությունները ընդհանրապես չեն շտկվել, որն էլ հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի կողմից՝ որոշում է կայացվել «Արագած» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ կարևորագույն հանգամանքների վրա.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 08.10.2021թ. արձանագրվել էր, որ Ընկերության կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում՝ բացակայել է իրական

շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը, արկղի ուրվագծային պատկերը և հատակի կահավորվածության պատկերը: Գնահատող հանձնաժողովը, նույն նիստի ժամանակ, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ որոշում է կայացրել կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատաս-խանությունները: Այնուհետև՝ գնահատող հանձնաժողովի 12.10.2021թ. տեղի ունեցած նիստի համապատասխան արձանագրության համաձայն՝ «Արագած» ՍՊԸ-ի կողմից վերը նշված ժամկետում (մինչև 09.10.2021թ.) անհմապատասխանությունները ընդհանրապես չեն շտկվել, որն էլ հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի կողմից՝ որոշում է կայացվել «Արագած» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատիո ունենալ, որ առկա է եղել ֆորս-մաժորային իրավիճակ, որի պայմաններում «Արագած» ՍՊԸ-ի կողմից համապատասխան շտկումները չկատարելը եղել է օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված:

Մասնավորապես.

2020թ. դեկտեմբերի 8-ին «Հաշվողական տեխնիկայի և ինֆորմատիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի և «Արագած» ՍՊԸ-ի միջև կնքված և նոտարական կարգով վավերացված "Անշարժ գույքի վարձակալության պայմանագրի" համաձայն (պայմանագրի պատճենը կցվում է)՝ «Արագած» ՍՊԸ-ին վարձակալության հիմունքներով հանձնվում է ք. Երևան, Աջափնյակ, Աբելյան փ., 6/9 շենքի, 3-րդ շինության հասցեում գտնվող անշարժ գույքը (2-րդ հարկ, A 204 սենյակը):

«Հաշվողական տեխնիկայի և ինֆորմատիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից 12.11.2021թ. տրված թիվ 11/69 տեղեկանքի համաձայն՝ արձանագրվել է հետևյալը. ««Հաշվողական տեխնիկայի և ինֆորմատիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ին պատկանող և «Արագած» ՍՊԸ-ին վարձակալությամբ հանձնված է ք. Երևան, Աջափնյակ, Աբելյան փ., 6/9 շենքի, 3-րդ շինության հասցեում գտնվող անշարժ գույքում՝ A 204 սենյակում առաստաղային միացված լամպի կարճ միացման պատճառով առաջացած հրդեհի հետևանները վերացնելու և վերանորոգման աշխատանքներ կատարելու պատճառով վերը նշված սենկայում հոկտեմբերի 7-17 ներառյալ էլեկտրոէներգեի և ինտերնետի կապը անջատված է եղել:

«Հաշվողական տեխնիկայի և ինֆորմատիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի և «Արագած» ՍՊԸ-ի կողմից 07.10.2021թ. կազմված և համապատասխան կնիքով և տորագրությամբ հաստատված, ինչպես նաև «Գարդիան» ՍՊԸ-ի անվտանգության

աշխատակցի և գլխավոր էներգիտիկի կողմից հաստատված արձանագրության համաձայն՝ հաստատվում է, որ 2021թ. հոկտեմբերի 6-ից լույս գիշերից լույս հոկտեմբերի 7-ը հրդեհ է բռնկվել ք. Երևան, Աջափնյակ, Աբեյան փ., 6/9 շենքի, 3-րդ շինության հասցեում գտնվող նA 204 սենյակում: Հրդեհից առաջացած ծուխը նկատել է անվտանգության աշխատակիցը, տեղեկացրել է ընկերության էներգետիկին, ով ներկայացել է դեպքի վայր և հոսանքազրկել է տարածքը: Հրդեհը մարվել է աշխատակիցների ուժերով:

Այսպիսով, ներկայացված ապացույցները վկայում են, որ 07.10.2021թ. բռնկված հրդեհի պատճառով այրվել է «Արագած» ՍՊԸ-ի կողմից վարձակալած տարածքը, վնասվել է վերջինիս գույքը, այդ թվում նաև համակարգիչները, որտեղ պահվել են տվյալ Մրցույթին վերաբերող բոլոր փաստաթղթերը: Նշված տարածք «Արագած» ՍՊԸ-ն կարողացել է վերադառնալ և վերսկսել իր բնականոն աշխատանքը միայն 17.10.2021թ. հետո:

Նման պայմաններում, գտնում ենք, որ «Արագած» ՍՊԸ-ն օբյեկտիվորեն զրկված է եղել Մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից ուղարկված ծանուցումը ստանալու և մինչև 12.10.2021թ. ներառյալ համապատասխան շտկումները կատարելու հնարավորությունից: Այդ իսկ պատճառով «Արագած» ՍՊԸ-ի կողմից շտկումը ընհանրապես չի կատարվել՝ առաջացած հրդեհի և դրա հետևանքներով պայմանավորված:»:

Ելնելով վերոգրյալից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Արագած» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ի լրումն վերոնշյալ գրության, Մասնակիցը 18.11.202թ.-ին թիվ ԱՐ/187 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «Արագած» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը, որի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ լրացուցիչ նկատառումները, մասնավորապես՝ հայտնում և հավաստում ենք, որ «Արագած» ՍՊԸ-ի կողմից վարձակալված գրասենյակային տարածքներից մյուսը՝ մասնավորապես 207 սենյակը՝ նախատեսված է բացառապես ցուցահանդեսի և հանդիպումների համար:

Վերը նշված սենյակում բացի ցուցահանդեսի և հանդիպումների համար նախատեսված սեղանից, պաստառներից և ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքներից՝ այլ գույք (օրինակ՝ համակարգիչ) առկա չէ:

Կից ներկայացվում են սենյակի նկարները:»:

4. <u>ՍՑ-LO-2021/301 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից արկղերի ձեռքբերման նպատակով 25.09.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-22/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Արագած» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-22/8» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 08.10.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ «Արագած» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում բացակայում է արկղի ուրվագծային և հատակի կահավորվածության պատկերները:

v. Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, 08.10.2021թ.-ին որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Արագած» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովը, 12.10.2021թ.-ին շարունակելով նիստը, արձանագրել է, որ «Արագած» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել պահանջվող շտկումները, ինչով պայմանավորված որոշում է կայացրել Մասնակցի հայտը մերժել:

vii. «Արագած» ՍՊԸ-ի կողմից Բողոքներ քննող անձին ներկայացված «Հաշվողական տեխնիկայի և իմֆորմատիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի ղեկավարի կողմից 12.11.2021թ.-ին տրված թիվ 11/69 տեղեկանքի համաձայն՝ 2021թ.-ի հոկտեմբերի 6-ի լույս 7-ի գիշերը «Հաշվողական տեխնիկայի և իմֆորմատիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի սոփականություն հանդիսացող շենքում «Արագած» ՍՊԸ-ի կողմից վարձակալած /պայմանագիր 08.12.2020թ./ A204 սենյակում /սեփականության վկայական թիվ 26122017-01-0331/ առաստաղին ամրացված լամպի կարճ միացման պատճառով առաջացած հրդեհի հետևանքները վերացնելու և վերանորոգման աշխատանքները կատարելու պատճառով վերը նշված սենյակում հոկտեմբերի 7-ից 17-ը ներառյալ էլեկտրաէներգիան և ինտերնետ կապը անջատված են եղել:

viii. Գործում առկա նյութերի համաձայն՝ «Հաշվողական տեխնիկայի և իմֆորմատիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի և «Արագած» ՍՊԸ-ի միջև 2020թ.-ի դեկտեմբերի 8-ին կնքված անշարժ գույքի վարձակալության մասին պայմանագրի համաձայն՝ նույն պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել ք. Երևան, Աջափնյակ, Աբելյան փողոց 6/9 շենք, 3 շինություն հասցեում գտնվող անշարժ գույքից /2-րդ հարկ, A 204 և A 207 սենյակներ/ նախատեսված տարածքը…:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.10.2021թ.-ի թիվ 26/26-1/17335-2021 գրությամբ «Արագած» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում

մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ապրանքների գնման դեպքում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը

դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից արկղերի ձեռքբերման նպատակով 25.09.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-22/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն

հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ անդրադարձել է վկայակոչված հոդվածի մեկնաբանությանը: Մասնավորապես, ՀՀ

վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է մեղքի բացակայության պարագայում պարտավորությունը խախտած անձի պատասխանատվությունը, եթե պարտավորությունը բխում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումից: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձն ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Այդ կանոնը կիրառելի չէ, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսվել է նույնիսկ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձի պատասխանատվություն կրելու հանգամանքը *(տե՛ս, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Լանդրաս» ՓԲԸ-ի թիվ ԵՔԴ/0595/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):*

Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով: Անհաղթահարելի ուժի կիրառումը պետք է պայմանավորված լինի այնպիսի հանգամանքների զուգորդմամբ, որոնք անհնարին են դարձնում կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ընդդեմ*

«Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):

Բողոքներ քննող անձը հավելում է նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Վերոգրյալի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը (ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից արկղերի ձեռքբերման նպատակով 25.09.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-22/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.10.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ «Արագած» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում բացակայում է արկղի ուրվագծային և հատակի կահավորվածության պատկերները, ինչով պայմանավորած Հանձնաժողովը 08.10.2021թ.-ին որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Արագած» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սակայն 12.10.2021թ.-ին Հանձնաժողովը շարունակելով նիստը, արձանագրել է, որ «Արագած» ՍՊԸ-

ն սահմանված ժամկետում չի ներկայացրել պահանջվող շտկումները, ինչով պայմանավորված որոշում է կայացրել Մասնակցի հայտը մերժել:

«Արագած» ՍՊԸ-ի կողմից Բողոքներ քննող անձին ներկայացված «Հաշվողական տեխնիկայի և իմֆորմատիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի ղեկավարի կողմից 12.11.2021թ.-ին տրված թիվ 11/69 տեղեկանքի համաձայն՝ 2021թ.-ի հոկտեմբերի 6-ի լույս 7-ի գիշերը «Հաշվողական տեխնիկայի և իմֆորմատիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի սոփականություն հանդիսացող շենքում «Արագած» ՍՊԸ-ի կողմից վարձակալած /պայմանագիր 08.12.2020թ./ A204 սենյակում /սեփականության վկայական թիվ 26122017-01-0331/ առաստաղին ամրացված լամպի կարճ միացման պատճառով առաջացած հրդեհի հետևանքները վերացնելու և վերանորոգման աշխատանքները կատարելու պատճառով վերը նշված սենյակում հոկտեմբերի 7-ից 17-ը ներառյալ էլեկտրաէներգիան և ինտերնետ կապը անջատված են եղել: Գործում առկա նյութերի համաձայն՝ «Հաշվողական տեխնիկայի և իմֆորմատիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի և «Արագած» ՍՊԸ-ի միջև 2020թ.-ի դեկտեմբերի 8-ին կնքված անշարժ գույքի վարձակալության մասին պայմանագրի համաձայն՝ նույն պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել ք. Երևան, Աջափնյակ, Աբելյան փողոց 6/9 շենք, 3 շինություն հասցեում գտնվող անշարժ գույքից /2-րդ հարկ, A 204 և A 207 սենյակներ/ նախատեսված տարածքը...:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունն անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է ընթացակարգի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Ուստի, այն դեպքերում, երբ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Մասնակցի կողմից գնման գործընթացում ստանձնած պարտավորությունն անպատշաճ կատարելը չի կարող հանգեցնել պատասխանատվության, քանի որ բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վերջինիս մեղքի առկայությունը: Մասնակիցը օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու

բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն, իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված, հնարավոր չի եղել դրանք հասցնել իրենց տրամաբանական ավարտին:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.10.2021թ.-ի թիվ 26/26-1/17335-2021 գրությամբ «Արագած» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/301 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**